



CONSECRATED IN 1953

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՆԱՅԱՏԱՆԵԱՅՑԻ ԵԿԵՂԵՑԻ

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

14 WOODLAWN AVE. WEST, TORONTO, ONTARIO, M4V 1G7,

PARISH OFFICE TEL: 924-6514

PARISH HALL TEL: 923-0081

Right Rev. Bishop Aris Shirvanyan - Pastor

25187

2 Փետր. 1977

Մայր 7

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպ. Մանուկեան
Բարեհնամ Առաջնորդ Հիւս. Ամերիկայի
Արեւելեան Թեմի եւ Նախագահ Թեմական Խորհուրդի,
Նիւ Եօրք.

Արքայան Հայր,

Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 30 Յունուար 1977-ին, կէսօրէ ետք ժամը 3.30-ին, Մեր Նախագահութեամբ եւ ատենապետութեամբ Տիար Պարգեւ Խոնամեանի եւ ատենաղպրութեամբ Տեարք Հրաչ Շիշմանեանի եւ Մատթ Մամուրեանի:

Եկեղեցւոյս 365 տրատու անդամներէն 110-ի ներկայութեան եւ օրինաւոր նիստին կարդացուեցան եւ վաւերացուեցան հոգեւոր հովուի, ծխական խորհուրդի եւ եկեղեցապատկան մարմիններու տեղեկագիրները, ինչպէս նաեւ եկեղեցւոյս 1977 տարւոյ ելեւմտական նախահաշիւը:

Այս առթիւ կատարուեցաւ ծխական խորհուրդի հինգ (5) անդամներու ընտրութիւն: Դադրող անդամներն են՝ Տեարք Մարտիկ Հեքիմեան, Երուանդ Զուլմեան, Ժիրայր Երէցեան, Մուշեղ Շահնազարեան եւ Միսաք Գոմետիսեան: Ասոնց փոխարէն 108 քուէարկողներու մասնակցութեամբ քուէներու առաւելութեան կարգով հետեւեալ հինգը ընտրուած յայտարարուեցան.-

Տեարք	Յակոբ Երէցեան	83 քուէ
	Հէրի Արթինեան	81 քուէ
	Հրաչ Պօյաճեան	69 քուէ
	Կարօ Խապայեան	66 քուէ
	Խաչիկ Գուլումեան	59 քուէ

Այստեղ ցաւով կուզենք Ձեզի յայտնել որ անցեալ տարի ծխական խորհուրդիս անդամ վերընտրուած Տիար Եղուարդ Էօտէմիշլեան Սեպտ. 1976-ին ունեցած անակնկալ ուղեղային կաթուածի հետեւանքով ի վիճակի չէ եղած ծխական խորհուրդիս ժողովներուն իր մասնակցութիւնը բերել, ու թէեւ քարելաւում մը կայ իր առողջական վիճակին մէջ սակայն անհարող է այսուհետեւ ծխական խորհուրդի իր սարտականութիւններէ կատարել:



CONSECRATED IN 1953

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՆԿՅԱՍԱՆՆԵԱՅՑԻ ԵԿԵՂԵՑԻ

HOLY TRINITY ARMENIAN CHURCH

14 WOODLAWN AVE. WEST, TORONTO, ONTARIO, M4V 1G7,

PARISH OFFICE TEL: 924-6514

PARISH HALL TEL: 923-0081

Right Rev. Bishop Aris Shirvanyan - Pastor

Ուստի պիտի խնդրէինք որ վերոյիշեալներուն հետ միասին նաեւ վաւերացնէիք իբրեւ անձնափոխանորդ՝ յաջորդ առաւելագոյն քուէ ստացած (44 քուէ) Տիար Տիգրան Տաքէսեանը, զոր պիտի հրաւիրենք իբրեւ ծխական խորհուրդի անդամ՝ ծառայելու համար մէկ տարի՝ ամբողջացնելու Պրն. Էօտէմիշլեանի շրջանը: Հետեւաբար յիշեալ վեց անձերուն համար կը խնդրենք Ձերդ Արքագանութեան վաւերացումն ու օրհնութիւնը:

Ծխական խորհուրդի համար յաջորդ առաւելագոյն քուէները ստացողներն են՝ Տեարք Մատթ Մամուրեան, 36 քուէ, Մկրտիչ Մերաս, 25 քուէ, Եղուարդ Սարաֆեան, 22 քուէ եւ Ղեւոնդ Խոսրովեան, 20 քուէ:

Կը ներփակենք այն պրակը որ կը պարունակէ Մեր փոխանորդական եւ հովուական միացեալ զեկոյցը, ծխական խորհուրդի եւ յարակից մարմիններու տեղեկագիրները եւ ելեւմտացոյցը: Իսկ Տարեկան թողովի ատենագրութիւնը կուղարկենք աւելի ուշ:

Սիրաւիր ողջունիւ
Աղօթակից՝
Արիս Եպիսկ. Տիգրան
Արիս Եպիսկ. Տիգրանեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդ.
Հայց. Եկեղեցւոյ